ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 761-Ա **30 դեկտեմբերի 2022 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2042-Ն որոշման դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի վնասված բնակելի տներին հասցված վնասները փոխհատուցելու համար Սոթք բնակավայրում 5/հինգ/ վնասված բնակարանների վերականգնման համար հատկացնել 1752100/մեկ միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար հարյուր/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաշվի առնելով, որ Սոթք բնակավայրի բնակիչներ Իշխան Պողոսյանը և Գրիգորի Ավագյանը չունեն անձնագիր, իսկ Արամ Գազարյանը, Նունուֆար Կարակեդյանը և Գրիգորի Գաբրիելյանը ունեն առողջական խնդիրներ, ուստի նրանց հասանելիք օգնության գումարները փոխանցել Սոթք բնակավայրի վարչական ղեկավար Սևակ Խաչատրյանի անունով: Վերջինիս հանձնարարել աշխատանքների ավարտից հետո մարզպետարան ներկայացնել հաշվետվություն՝ ըստ շահառուների, գումարների ծախսման վերաբերյալ:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ՖՍՏՀ վարչությանը՝ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

X

ՎԱՀԱՆ ԶԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
Վ. ԶԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2022 թ. դեկտեմբերի 30 - ի
N 761-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

հ/հ	ազգանուն անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	Ծանոթություն
1.	Գաբրիելյան Գրիգորի	Վարդենիս համայնք, Սոթք բնակավայր	378000/երեք հարյուր յոթանասունութ հազար /	Սոցիալապես անապահով
2.	Պողոսյան Իշխան	Վարդենիս համայնք, Սոթք բնակավայր	319000/երեք հարյուր տասնինը հազար /	Սոցիալապես անապահով
3.	Ավագյան Գրիգորի	Վարդենիս համայնք, Սոթք բնակավայր	443700/չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր/	Սոցիալապես անապահով
4.	Կարակեդյան Նունուֆար	Վարդենիս համայնք, Սոթք բնակավայր	382200/երեք հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր/	Սոցիալապես անապահով
5.	Գազարյան Արամ	Վարդենիս համայնք, Սոթք բնակավայր	229200/երկու հարյուր քսանինը հազար երկու հարյուր/	Սոցիալապես անապահով
Ընդամենը			1752100/մեկ միլիոն յոթ հարյուր հիսուներկու հազար հարյուր/	

30.12.2022

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ս.ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Կատարող՝ ՖՍՏԶ Վարչություն
Ա.Բաղեյան